# ՎՐԱՍՏԱՆ

«ՑՐԱՆՑՏԱՆՕ» (ՍԱՔԱՐԹՎԵԼՕ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 27 - 28 (16223) ՇԱԲԱԹ, 5 ԱՊՐԻԼԻ 2014 Թ. ԳԻՆԸ՝ 25 ԹԵԹՐԻ



ՇՐՋԱՅՑ

## ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ՄԵՆՔ ԽԱՂԱՂ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ ԿՎԵՐԱԴԱՐՁՆԵՆՔ ՑԽԻՆՎԱԼԻՆ ՈՒ ՍՈՒԽՈՒՄԻՆ»

*Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին ապրիլի երկուսին երկօրյա շրջայցով եղավ Սամեգրելոյի տարածաշրջանում եւ Աջարիայի Ինքնավար Հանրապետությունում:*



Այցի շրջանակներում, վարչապետը ծանոթացավ երկրամասերում ընթացքի մեջ գտնվող նախագծի կատարման գործընթացին, սոցիալ-տնտեսական զարգացման առաջիկա ծրագրերին:

Զուգդիդիում հասարակայնության հետ հանդիպմանը Իրակլի Ղարիբաշվիլին խոսեց հակամարտությունների կարգավորման ուղղությամբ կառավարության գործադրած այլերի մասին: Մասնավորապես նա նշեց, որ աբխազ եւ օս եղբայրների հետ հաշտեցումը պետք է տեղի ունենա կառուցողական երկխոսության շրջանակներում:

«Այո', դա բարդ հարց է: Նախկին իշխող կուսակցության ներկայացու-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԱՊՐԻԼԻ 9-Ը
ՎՐԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ՕՐՆ Է

*Վրաստանի համար ապրիլը առանձնակի ամիս է: 1989 թվականի ապրիլի 9-ին մայրաքաղաքի Ռուսթավելու պողոտայում հեղվեց անկախության համար պայքարողների արյունը...*



*Պաշտոնական տվյալներով, այդ օրը զոհվեց 21 հոգի, որոնցից 16-ը կանայք էին: Ողբերգությունից ուղիղ երկու տարի անց, 1991 թվականի Ապրիլի 9-ին Վրաստանի Գերագույն խորհուրդը, հիմնվելով 1918 թվականի անկախության ակտի վրա, վերականգնեց Վրաստանի անկախությունը:*

*Հիմա դժվար է ասել, թե ինչով էր պայմանավորված նման զուգադիպությունը. դա վերուստ էր կանխագծվա՞ծ, թե՞ ուղղակի պատմական օրինաչափություն էր: Սակայն փաստ է, որ Ապրիլի 9-ի լուսադեմին խորհրդային զորքերի կողմից Ռուսթավելու պողոտայի վրա հեղված արյունը Կրեմլի կողմից Վրաստանի բռնազավթման հերթական, թեպետ ապարդյուն փորձն էր: Հոգեվարք ապրող կայսրությունը, թեկուզեւ դաժանությամբ, արդեն ի վիճակի չէր կանգնեցնել պատմության օրինաչափ ընթացքը, ինչն էլ իր արտացոլումը գտավ 1991 թվականի Ապրիլի 9-ին ստորագրած անկախության հռչակագրում:*

*Բոլոր դեպքերում, 25 եւ 23 տարվա վաղեմության այս երկու իրադարձություններն իրենց ուրույն տեղն են գրավել Վրաստանի նորագույն պատմության էջերում, մի կողմից՝ ցավ ու կսկիծ, մյուս կողմից՝ հպարտության եւ աներերության զգացում առաջացնելով:*

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

## ՎՐԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ԼԵՀԱՍՏԱՆՈՒՄ

*Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին պաշտոնական այցով գտնվում էր Լեհաստանում:*



Վրաստանի նախագահը, այցի շրջանակներում, հանդիպում ունեցավ Լեհաստանի նախագահ Բրոնիսլավ Կոմորովսկու, վարչապետ Դոնալդ Տուսկի, Լեհաստանի Սեյմի մարշալ Եվա Կոպաչի եւ այլ պաշտոնատար անձանց հետ: Ուղեւորության շրջանակներում, միջոցառումների մի մասը անցկացվեց Վարշավայում, իսկ մյուս մասը՝ Կրակովյոյում:

Վարշավայի նախագահական նստավայրում կայացած հանդիպմանը, երկու երկրների նախագահների առանձնազրույցից հետո, բանակցությունները շարունակվեցին ընդլայնված կազմով: Հանդիպմանը նշվեց երկու երկրների միջեւ տնտեսության եւ առեւտրի ոլորտ-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՏԱՐԵԼԻՑ

## ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ՝ ԶՎԻԱԴ ԳԱՄՍԱԽՈՒՐԴԻԱՅԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

*Մարտի 31-ին, Թբիլիսիի քաղաքապետարանի եւ սակրեբուլոյի նախաձեռնությամբ, անցկացվեցին Վրաստանի առաջին նախագահ Զվիադ Գամսախուրդիայի ծննդյան 75-ամյակին նվիրված միջոցառումներ:*



Այդ օրը Թբիլիսիի Մթածմինդայի պանթեոնում Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Երկրորդը մատուցեց հոգեհանգստի պատարագ: Միջոցառմանը ներկա էին Զվիադ Գամսախուրդիայի ընտանիքի անդամները, հասարակության ներկայացուցիչներ: Վրաստանի առաջին նախագահի ծննդյան 75-ամյակի առթիվ Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին ծաղկեպսակներ դրեց նրա շիրիմին:

Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին առաջին նախագահի հիշատակի հավերժացման նպատակով ընդունել է Զվիադ Գամսախուրդիայի անվան կրթաթոշակ սահմանելու որոշում: Կրթաթոշակը կտրվի Թբիլիսիի պետական համալսարանի բանասիրության ֆակուլտետի տարվա լավագույն ուսանողին:

Վրաստանի առաջին նախագահի զավակներ Կոնստանտին, Գիորգի եւ Ցոտնե Գամսախուրդիաները, երկրի ղեկավարությանը դիմել են Զվիադ Գամսախուրդիայի մահվան հանգամանքների պարզեցման խնդրանքով: Այդ որոշման մասին հասարակայնությանը տեղեկացրեց Կոնստանտինե Գամսախուրդիան մարտի 31-ին, Մթածմինդայի պանթեոնում անցկացվող միջոցառումների ժամանակ:

ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ

## ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ ՀԵՏ



*Մարտի 28-ին Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին հանդիպում ունեցավ Վրաստանում Եվրամիության դիտորդական առաքելության (EUMM) ղեկավար Տայվո Կլարի հետ:*

Հանդիպմանը քննարկվեց գլխավոր թեմաներից մեկը, որը հակամարտության գոտիներում ստեղծված իրավիճակն էր:

Կողմերը նաեւ քննարկեցին փշալարերի երկայնքով ապրող բնակչության վիճակի հարցը: Առաքելության ղեկավարը նախագահին ներկայացրեց հումանիտար եւ անվտանգության առումով տարածաշրջանում առկա իրավիճակի հետ կապված իր նկատառումները: Գիորգի Մարգվելաշվիլին եւ Տայվո Կլարն անդրադարձան նաեւ մարտին Ժնեւում անցկացված բանակցությունների արդյունքներին: Քննարկեցին նաեւ Ուկրաինայում ստեղծված իրավիճակը եւ դրա հետեւանքները, որոնք կարող են ազդեցություն գործել վրաց-ռուսական հարաբերությունների վրա:

ՎՐԱՍՏԱՆ-ՆԱՏՕ

## ԱՆԴԵՐՍ ՖՈԳ ՌԱՍՄՈՒՍԵՆ. «ՎՐԱՍՏԱՆԸ ՄՈԴԵԼ Է ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ»

*ՆԱՏՕ-ն Վրաստանը մոդել է համարում հետխորհրդային պետությունների համար, որը զինվորներ է մատակարարում դաշինքի ռազմական գործողությունների համար եւ պատրաստվում է անդամակցել կազմակերպությանը:*




Այդ մասին հայտարարեց ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Անդերս ֆոգ Ռասմուսենը:

«Վրաստանը մոդել է ամբողջ տարածաշրջանի համար: Նա անվտանգության արտահանող է եւ պատրաստ է գործնականում իրականացնել իր եվրատլանտյան ձգտումները»,- հայտարարեց Ռասմուսենը՝ բացելով Վրաստան-ՆԱՏՕ հանձնաժողովի պլանային նիստը: ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարը նաեւ ողջունել է Վրաստանի «նշանակալի հաջողությունները» ժողովրդավարական բարեփոխումների ճանապարհին:

«ՆԱՏՕ-ի մեջ չմտնող պետություններից Վրաստանն է առավել շատ զինվորականներ տրամադրել Աֆղանստանի գործողությունների համար, եւ մենք ողջունում ենք դաշինքի Արագ հակազդման ուժերին մասնակցելու նրա որոշումը»,- ասաց ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարը եւ հավելեց, որ դեռեւս չափազանց վաղ է խոսել ՆԱՏՕ-ին Վրաստանի անդամակցության համար գործողությունների ծրագրի մասին:

«Առայժմ վաղ է խոսել, թե հատկապես ինչպես կհաստատվեն այդ հաջողությունները ՆԱՏՕ-ի՝ սեպտեմբերի 4-5-ին Ուելսում կայանալիք գագաթաժողովում: Մենք գործընկերության ընդլայնման մեծ հնարավորություններ ունենք»,- ասաց Ռասմուսենը:

ՀԱՅԱՍՏԱՆ

## ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԸ ՀՐԱԺԱՐԱԿԱՆԻ ԴԻՄՈՒՄ Է ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ

*«Հայաստանի Հանրապետության վարչապետ Տիգրան Սարգսյանը նախագահ Սերժ Սարգսյանին հրաժարականի դիմում է ներկայացրել: Հայաստանի Հանրապետական կուսակցության գործադիր մարմինն ընդունել է հրաժարականը»,- ասաց ՀՀԿ մամուլի խոսնակ Էդուարդ Շարմազանովը:*



Նա նշեց, որ վարչապետը հրաժարականի դիմում է ներկայացվել դեռեւս մեկ ամիս առաջ, սակայն քանի որ բանակցություններ էին ընթանում Մաքսային միության հետ կապված, պետք է կազմակերպվեր ՀՀԿ միջազգային տնտեսական կոնֆերանսը, նախագահը նրան խնդրել էր որոշ ժամանակ շարունակել իր լիազորությունները: «Վարչապետն ասել է, որ սա կշռադատված որոշում է, եւ պահի տակ չի կայացրած»,- ասաց Շարմազանովը՝ ընդգծելով, որ նոր կառավարության հարց չի քննարկվել:

Տիգրան Սարգսյանը ՀՀ վարչապետի պաշտոնն ստանձնել է 2008թ. ապրիլի 9-ին:

(Շարունակությունը՝ 7-րդ էջում)

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

# ՎՐԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ԼԵՀԱՍՏԱՆՈՒՄ

(Սկիզբը` 1-ին էջում)

ներում համագործակցության խորացման անհրաժեշտությունը: Հանդիպմանը քննարկվեցին նաեւ Վրաստանի եվրոպական եւ եվրատլանտյան ինտեգրման հարցերը: Քննարկման թեմաներից մեկը միջազգային անվտանգության հարցն էր: Հանդիպմանն առնչվեցին նաեւ Ուկրաինայի իրավիճակի հարցին: Հանդիպման ավարտից հետո ընդունվեց համատեղ հայտարարություն:

Վրաստանի նախագահի եւ Լեհաստանի վարչապետի հանդիպման գլխավոր թեման տնտեսական համագործակցության հարցերն էին: Անդրադառնալով Վրաստանի եվրաինտեգրման հարցին` Դոնալդ Տուսկը լիարժեք աջակցություն արտահայտեց այդ ուղղությամբ Վրաստանի գործադրած ջանքերին:

Այցի շրջանակներում, Գիորգի Մարգվելաշվիլին հանդիպում ունեցավ Լեհաստանում վրացական համայնքի ներկայացուցիչների հետ:

ՇՐՋԱՅՑ

# ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ՄԵՆՔ ԽԱՂԱՂ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ ԿՎԵՐԱԴԱՐՁՆԵՆՔ ՑԽԻՆՎԱԼԻՆ ՈՒ ՍՈՒԽՈՒՄԻՆ»

(Սկիզբը` 1-ին էջում)

ցիչները մեր եղբայր աբխազների եւ օսերի հետ խոսել են ատելության լեզվով: Մենք առաջին հերթին պետք է հոգ տանենք ոչ թե տարածքի վերադարձման, այլ մեր եղբայրների հետ վստահության կամրջի կառուցման մասին:

Ես ցանկանում եմ ձեզ ասել, որ նախորդ տարիներին սխալներ են թույլ տրվել, բայց մենք չպետք է վախենանք դրանք խոստովանել: Կեղծ քայլեր են արվել 90-ականներին եւ ավելի ուշ: Վրաստանի նոր կառավարությունն ամբողջությամբ փոխել է վիճելի տարածքների վերաբերյալ հռետորաբանությունը եւ քաղաքականությունը` կանգնելով հաշտեցման ուղուն:

Այդ հարցը չի լուծվի մեկ օրում, այն լուրջ աշխատանքներ է պահանջում, սակայն ես հույս ունեմ, որ մի գեղեցիկ օր մենք կվերադարձնենք Սուխումին ու Ցխինվալին, եւ դա տեղի կունենա միայն խաղաղ ճանապարհով»,- տեղի բնակիչների հետ հանդիպման ժամանակ ասաց վարչապետը:



Շրջայցի շրջանակներում, ապրիլի 3-ին Բաթումիում Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին հանդիպում ունեցավ Աջարիայի Ինքնավար Հանրապետության կառավարության նախագահի եւ անդամների հետ: Հանդիպմանն անդրադարձան երկրամասում ընթացիկ նախագծերի, առկա հիմնախնդիրների եւ դրանց լուծման ուղիների հարցին: Ղարիբաշվիլին հետաքրքրվեց Աջարիայի առջեւ ծառացած գլխավոր մարտահրավերների եւ բնակչության համար հիմնախնդրային հարցերով: Հանդիպմանը քննարկվեցին նաեւ երկրամասի զարգացման` ինչպես կարճաժամկետ, այնպես էլ երկարաժամկետ ծրագրերը: Նշվեց, որ վերջին ժամանակներս անշարժ գույքի շուկան նկատելիորեն աշխուժացել է, եւ շեշտը դրվեց ծրագրված շինարարության որակի վրա: Աջարիայի կառավարության ղեկավար Արչիլ Խաբաձեն Վրաստանի վարչապետին տեղեկատվություն հաղորդեց Աջարիայի տնտեսական եւ սոցիալական իրավիճակի մասին:

ՀԱՆԴԻՊՈՒՄ



# ՆԱԽԱԳԱՀԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՐԵՑ ԱՌԱՋԻԿԱ ԾՐԱԳՐԵՐԸ

*Ապրիլի 1-ին, համավրացական «Բազմազգ Վրաստան» շարժման գրասենյակում ազգային փոքրամասնությունների ղեկավարների խորհրդի նիստին, հյուրի կարգավիճակով, մասնակցեց ազգային փոքրամասնությունների հարցերով Վրաստանի նախագահի խորհրդական Սոֆյա Շամանիդին: Հանդիպմանը ներկա էին Վրաստանի 20 ազգային համայնքի ղեկավարները:*

Նրանք նախագահի խորհրդականի հետ խոսեցին առկա հիմնախնդիրների եւ դրանց կարգավորման ուղիների մասին:

Իր հերթին, Սոֆյա Շամանիդին ներկայացրեց տեղեկատվություն իր գործունեության եւ առաջիկա ծրագրերի մասին:

Ազգային փոքրամասնությունների ղեկավարների միջեւ նման հանդիպումներն անցկացվում են ամիսը մեկ անգամ, եւ դրանց պարտադիր կարգով մասնակցում են պատվավոր հյուրեր:

ԻՐԱՎԱԿԱՆ

# ԱՐՏԱՀԱՅՏԵԼ Է ԴԱՏԱՐԱՆԻ ՃՈՒՃՄՈՒՆՔ ՏԱԼՈՒ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՄՈՒԹՅՈՒՆ

*Ազգային շարժումը տարածել է տեղեկատվություն, ըստ որի, երկրի նախկին նախագահ Միխեիլ Սաակաշվիլին պատրաստակամություն է հայտնել կոնկրետ գործի քննարկման ժամանակ դատարանում ցուցմունք տալ:*

«Եթե դատարանը էական քննարկմանը գտնի, որ նա այն վկան է, ով պարտադիր կարգով պետք է հարցաքննվի, որպեսզի կոնկրետ գործով պարզվի իրականությունը, այդ դեպքում, Միխեիլ Սաակաշվիլին «Սկայպի» միջոցով միացված տեսախցիկների եւ դատարանի դահլիճում մարդկանց, դատավորների եւ կողմերի ներկայությամբ ցուցմունք կտա: Միխեիլ Սաակաշվիլին կպատասխանի բոլոր այն հարցերին, որոնք կծագեն դատավորների կամ կողմերի մոտ, կոնկրետ գործի կապակցությամբ»,- հայտարարեց ազգային շարժման լիդեր Գիգի Ուգուլավան:

Նա նշեց նաեւ, որ եթե գերատեսչությունը չհամաձայնի վերոնշյալ պայմաններից, ապա Սաակաշվիլին կհրաժարվի հարցաքննությունից:

# ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՆՏՐՏՈՒՔ ՉԻ ՀԱՅՏԱՐԱՐՎԻ

*Ապրիլի 3-ին Վրաստանի գլխավոր դատախազի տեղակալ Իրակլի Շոթաձեն հայտարարեց, որ Վրաստանի նախկին նախագահ Միխեիլ Սաակաշվիլու կապակցությամբ միջազգային փնտրտուք չի հայտարարվի:*

«Միխեիլ Սաակաշվիլին չկատարեց իր քաղաքացիական պարտքը եւ, որպես վկա, ցուցմունք տալու համար հրաժարվեց ներկայանալ Վրաստանի դատախազությանը: Սակայն հետաքննությունը շարունակվում է, եւ այն կփորձի առանձին գործերով ապացույցներ ստանալ առանց նախկին նախագահի օգնության»,- ընդգծեց նա: Հիշեցնենք, որ մարտի 27-ին տասը տարբեր գործերով վկայի կարգավիճակով նախկին նախագահ Միխեիլ Սաակաշվիլին կանչվել է դատախազություն: Սակայն արտասահմանում գտնվող Սաակաշվիլին հրաժարվեց ներկայանալ: Ավելի ուշ, նա հայտարարեց, որ պատրաստ է, անհրաժեշտության դեպքում, ցուցմունքներ տալ «Սկայպի» միջոցով:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

# ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄՆ ԱՎԱՐՏՎԵՑ. ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ ԲԱՐՁՐ ՉԷ

*Ընթացիկ տարվա միասնական ազգային քննությունների համար բուհերում նախատեսված 42 հազար տեղի զբաղեցման մրցակցության մեջ գրանցվել է շուրջ 36 հազար դիմորդ:*

Ինչպես արդեն հաղորդել ենք, ընթացիկ տարվա ընդունելության գործընթացում ներառված են մի շարք նորամուծություններ, մասնավորապես, ավելացվել է ընդհանուր ունակությունների նվազագույն միավորների թիվը, բոլոր առարկաների քննություններին արգելագիծը սահմանվում է այսպես կոչված, նմանեցման միավորներով, օտար լեզուների քննությանն ավելացվել է ունկնդրման բաժինը, իսկ ընտրական առարկաների թվում ավելացվել է արվեստի բաժինը:



Ինչպես նշեցին քննությունների ազգային կենտրոնում, մինչեւ քննությունների վերջը դժվար է հստակորեն պատկերացնել, թե որքանով իրենց կարդարացնեն կատարված նորամուծությունները: Մասնավորապես, մեզ հետ զրուցելիս, կենտրոնի տնօրեն **Մայա Միմինոշվիլին** նշեց, որ ընթացիկ տարվա ընդունելության քննությունները նշանակելիորեն կտարբերվեն նախորդ տարիների քննություններից: Միմինոշվիլու հավաստմամբ, ֆինանսավորման համակարգը փոփոխություններ չի կրել: Այն նախորդ տարիների նման, կլինի 100, 70 եւ 50 տոկոսանոց: Ներկա դրությամբ, պաշտոնական տեղեկատվություն չկա այն մասին, թե ֆինանսավորման համար որ առաջնահերթությունները կընտրվեն, եւ որոնք լրիվությամբ կֆինանսավորվեն պետության կողմից: Թեպետ ենթադրվում է, որ 100 տոկոսանոց ֆինանսավորում կստանան այն ուղղությունները, որոնք պետության համար կընկալվեն որպես հիմնարար, մասնավորապես, խոսքը վերաբերում է հումանիտար, այն է` վրացագիտության եւ բնագիտության ծրագրերին:

Ինչպես ասաց ուսուցիչների մասնագիտական զարգացման

(Շարունակությունը` 3-րդ էջում)



ՈՒԿՐԱԻՆԱ

## ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՇՏՈՆԻ 23 ԹԵԿՆԱԾՈՒ

*Ուկրաինայի կենտրոնական ընտրական հանձնաժողովն ավարտել է նախագահի թեկնածուների գրանցումը, այդպիսով` այդ երկրի նախագահի աթոռին հավակնում է 23 թեկնածու: ԿԸՀ գրանցման հայտեր են ներկայացրել 46 թեկնածու, սակայն նրանցից 23-ի գրանցումը մերժվել է` օրենքի պահանջներին չհամապատասխանելու պատճառով:*

*Այսպիսով, 23 թեկնածուներից 7-ի թեկնածությունն առաջադրել են քաղաքական ուժերը, 16-ը համարվում են ինքնաառաջադրվածներ: Քաղաքական ուժերի կողմից առաջադրված թեկնածուներն են. «Բատկիվշինա»-ի առաջնորդ Յուլիա Տիմոշենկոն, «Ազատություն»-ից` Օլեգ Տյագնիբոկը, Կոմունիստական կուսակցությունից` Պյոտր Սիմոնենկոն, «Քաղաքացիական դիրքորոշում»-ից` Անատոլի Գրիցենկոն, Ուկրաինայի ժողովրդական կուսակցությունից` Ալեքսանդր Կլիմենկոն, «Նարոդնի Ռուխ»-ից` Վասիլի Կույբիդան, Ռադիկալ կուսակցությունից` Օլեգ Լյաշկոն:*

*Ուկրաինայում նախագահական ընտրությունները տեղի կունենան մայիսի 25-ին:*

## ՁԵՐԲԱԿԱԼԵԼ ԵՆ «ԲԵՐԿՈՒՏԻ» ՄԱՐՏԻԿՆԵՐԻ

*Ուկրաինայի Գլխավոր դատախազությունը (ՈՒԳԴ) ձերբակալել է միլիցիայի «Բերկուտ» հատուկ ստորաբաժանման արդեն 12 մարտիկների` փետրվարի 18 -20-ը Կիեւի Ինստիտուտսկայա փողոցում մարդկանց գնդակահարման կասկածանքով:*

*Ձերբակալվածների թվում է այսպես կոչված «սեւ վաշտի» հրամանատարը, վաշտ, որն, ըստ հետաքննության տվյալների, ունեցել է հրազեն եւ անմիջականորեն կրակել է մարդկանց վրա:*

ՆԱՏՕ

## ԿԱՍԵՑՎՈՒՄ ԵՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԵՏ ԿԱՊԵՐԸ

*ՆԱՏՕ-ի անդամ երկրների արտաքին գործերի նախարարները որոշում են կայացրել կասեցնել Ռուսաստանի հետ քաղաքացիական եւ ռազմական գործնական համագործակցությունը` պահպանելով քաղաքական երկխոսությունը: Միաժամանակ, նախարարները նշել են, որ ՌԴ-ՆԱՏՕ խորհրդի քաղաքական երկխոսությունն անհրաժեշտության դեպքում կարող է շարունակվել դեսպանների եւ ավելի բարձր մակարդակով, որպեսզի հնարավորություն լինի մտքեր փոխանակել, առաջին հերթին, Ուկրաինայի շուրջ ստեղծված ճգնաժամային իրավիճակի վերաբերյալ:*

ՌՈՒՍԱՍՏԱՆ

## ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ԳԱԶԻ ԳԻՆԸ ԱՎԵԼԱՑՎՈՒՄ Է

*2014 թվականի ապրիլից Ուկրաինայի համար գազի գինը կկազմի հազար խորանարդ մետրի դիմաց 485 դոլար: Այդ մասին ՌԴ-ի վարչապետ Դմիտրի Մեդվեդեւի հետ կայացած հանդիպմանը հայտնել է «Գազպրոմ»-ի ղեկավար Ալեքսեյ Միլլերը: «Գազի գինն Ուկրաինայի համար կբարձրանա եւ ապրիլից կկազմի հազար խորանարդ մետրի դիմաց 485 դոլար»,- զեկուցել է Միլլերը:*

## ՆԱՎԱՏՈՐՄԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԸ ՉԵՂՅԱԼ ԵՆ ՀԱՅՏԱՐԱՐՎԵԼ

*Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը ստորագրել է ՌԴ-ի Սեւծովյան նավատորմի վերաբերյալ ռուս-ուկրաինական չորս համաձայնագրերի գործողությունը դադարեցնելու մասին օրենքը: Մարտի 28-ին ՌԴ-ի նախագահը այդ համաձայնագրերի գործողության դադարեցման մասին օրինագիծը ներկայացրել էր Պետդումայի քննարկմանը: Մարտի 31-ին այն միաձայն ընդունվել էր խորհրդարանի ստորին պալատի կողմից, իսկ ապրիլի 1-ին` հավանության արժանացել Դաշնության խորհրդի կողմից:*

# Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՈՒՂԻՂ

## ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ՀԱՐԿ Է ՈՒԺԵՂԱՑՆԵԼ ԴԱՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆԸ»



*Ապրիլի 3-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին հանդիպում ունեցավ երկրի Սահմանադրական դատարանի նախագահ Գիորգի Պապուաշվիլու հետ: Հանդիպումն անցավ դռնփակ:*

Հանդիպմանը քննարկվեցին դատական մարմինների նկատմամբ վստահության վերականգնման հետ առնչվող հարցեր: Վարչապետը ծանոթացավ դատարան ներկայացրած հայցերի բավարարման վիճակագրությանը:

Իրակլի Ղարիբաշվիլին ընդգծեց դատական մարմինների անկախության պահպանման անհրաժեշտությունը եւ նշեց, որ Վրաստանի կառավարության առաջնահերթություններից մեկը ժողովրդավարական ինստիտուտների ուժեղացումն է:

«Հանդիպումն արդյունավետ էր, մենք խոսեցինք դատական համակարգի անկախության պահպանման նշանակության մասին: Հարկ է նշել, որ մեր իշխանության գլխավոր նվաճումներից մեկը ազատ եւ անկախ դատարանն է»,- հանդիպումից հետո հայտարարեց Իրակլի Ղարիբաշվիլին:

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

## ՀԱՆԴԻՊՈՒՄ ԹՈՄԱՍ ՀԱՄԵՐԲԵՐԳԻ ՀԵՏ



*Հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության հարցերով պետական նախարար Պաատա Զաքարեիշվիլին հանդիպում ունեցավ մարդու իրավունքների հարցերով եվրամիության խորհրդատու Թոմաս Համերբերգի հետ:*

Հանդիպմանը Պաատա Զաքարեիշվիլին ու Թոմաս Համերբերգը մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից քննարկեցին Աբխազիայում եւ Հարավային Օսեթիայում ստեղծված իրավիճակը:

«Թոմաս Համերբերգը նաեւ հետաքրքրվեց կրոնական փոքրամասնությունների նկատմամբ պետական քաղաքականության իրականացման սկզբունքներով: Ես նրան տեղեկատվություն փոխանցեցի այդ հարցում առկա իրավիճակի վերաբերյալ»,- հանդիպումից հետո հայտարարեց Պաատա Զաքարեիշվիլին:

ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ

## ՅՈԹ ՄՈՒՆԻՑԻՊԱԼԻՏԵՏԸ ԿԲԱԺԱՆՎԻ ԵՐԿՈՒ ՄԱՍԻ

*Ախալցիխեի, Թելավիի, Գորիի, Զուգդիդիի, Օզուրգեթիի, Ամբրոլաուրիի եւ Մցխեթայի մունիցիպալիտետները կբաժանվեն երկու մասի: Խորհրդարանի տարածաշրջանային քաղաքականության եւ ինքնակառավարման կոմիտեն պաշտպանեց այդ հարցով կառավարության որոշումը:*

Կառավարության նախաձեռնության համաձայն, ինքնակառավարման քաղաքներից դուրս գտնվող տարածքները կդառնան առանձին մունիցիպալիտետներ: «Բնակավայրերից ինքնակառավարման քաղաքների առանձնացման արդյունքում, մնացած տարածքներում ինքնակառավարման քաղաքում վարչական կենտրոնով կհիմնվեն ինքնակառավարման համայնքներ: Օրինակ, Գորիի մունիցիպալիտետի օպտիմիզացման արդյունքում, կլինի ինքնակառավարման Գորի քաղաքը, իսկ մնացած տարածքում՝ ինքնակառավարման համայնքը՝ Գորիի մունիցիպալիտետը: Գորիի ինքնակառավարման քաղաքի վարչական սահմանները կհամընկնեն ներկայիս քաղաքի սահմանների հետ, իսկ Գորիի մունիցիպալիտետի սահմանները՝ Գորիի ինքնակառավարման քաղաքի տարածքի բացառությամբ, մունիցիպալիտետի սահմանների հետ: Գորիի մունիցիպալիտետի վարչական կենտրոնը կլինի Գորի քաղաքը»,- հայտարարեց խորհրդարանական կոմիտեի անդամ Գիա Ժորժոլիանին:

Հիշեցնենք, որ ներկա դրությամբ, Վրաստանում հաշվվում է ինքնակառավարման 69 միավոր:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

## ԱՆՑՆՈՒՄ ԵՆ ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՄԱՆ ԾՐԱԳԻՐ



*Սոցիալապես անպաշտպան բնակիչները, մանկավարժները, փախստականները, պետական մրցանակների դափնեկիրները, նախադպրոցական դաստիարակության հաստատությունների սաները, ովքեր մինչեւ օրս ապահովագրված էին մասնավոր ապահովագրական ընկերություններում, հետայսու բժշկական սպասարկումը կստանան առողջապահության համընդհանուր ծրագրի շրջանակներում:*

Նշյալ սպասարկումից կօգտվի շուրջ 400000 մարդ: Այդ մարդկանց կվերապահվի, ելնելով սակագներից, ինքնուրույն բժշկական հաստատություն ընտրելու իրավունք: Կփոփոխվի նաեւ ծրագրավորված, վիրաբուժական վիրահատությունների երաշխիքների հանձնման կարգը: Մասնավորապես, եթե մինչ օրս վերոնշյալ որոշումներից օգտվողների համար սահմանված էր վեցամսյա ժամկետ, ապա ներկայումս դա նվազեցված է մինչեւ երկու ամիս:

Ինչ վերաբերում է մանկատների սաներին, ովքեր շատ հաճախ անձնական վկայականների բացակայության պատճառով համապատասխան բժշկական սպասարկում չեն ստանում, նման հիմնախնդիրները կվերացվեն, եւ նրանց կտրվի համապատասխան փաստաթուղթ:

Ինչպես տեղեկացրին նախարարությունում, ապահովագրվածները ծրագրված վիրաբուժական վիրահատության անցկացման համար դիմելու են ընդհանուր առողջապահության սերվիս-կենտրոններին, իսկ ծրագրված ամբուլատորային սպասարկումների համար՝ ցանկացած բժշկական հաստատությանը: Այդ հարցով Վրաստանի աշխատանքի, առողջապահության եւ սոցիալական ապահովության նախարար Դավիթ Սերգեյենկոն ծրագրում է անցկացնել հատուկ մամլո ասուլիս:



### ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՆԵՐԻՆ ԿՏՐՎԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ

*Մանկապարտեզի դաստիարակներին մանկավարժի կարգավիճակի շնորհման նախաձեռնությամբ, Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին դիմեց կրթության նախարարին: Հիմնավորելով իր նախաձեռնությունը՝ Վրաստանի վարչապետը հայտարարեց. «Մանկապարտեզները նշանակալի հաստատություններ են, եւ դրանց դաստիարակները պետք է ունենան մանկավարժի կարգավիճակ: Ցանկանում եմ դիմել կրթության նախարարին, այդ հարցի շուտափույթ մշակման եւ կառավարությանը քննարկման ներկայացման կոչով»:*

### ՀԱՐՁԱԿՈՒՄ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ ՎՐԱ

*Մարտի 31-ի գիշերը իր տան մոտ հարձակման է ենթարկվել Վրաստանի խորհրդարանի պատգամավոր Նուգզար Ծիկլաուրին: Խորհրդարանական փոքրամասնության ներկայացուցչի խոսքերով, իրեն փորձել են առեւանգել, հասցրել են մարմնական վնասվածքներ:*

*Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին իրավապահներին կոչ է արել շուտափույթ հետաքննել պատգամավոր Նուգզար Ծիկլաուրու վրա հարձակման փաստը: Իր հերթին, Վրաստանի խորհրդարանի նախագահ Դավիթ Ուսուփաշվիլին խոստացել է անձնական վերահսկողության տակ պահել վերոնշյալ գործի հետաքննությունը:*

### ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ԿՎԵՐԱԴԱՌՆԱ ԹԲԻԼԻՍԻ

*Վրաստանի խորհրդարանի փոխխոսնակ Զվիադ Ձիձիգուրին հավաստում է, որ արդեն մեկ ամիս հետո Վրաստանի խորհրդարանի հին շենքում, որը գտնվում է Թբիլիսիում, հնարավոր կլինի անցկացնել երկրի բարձրագույն օրենսդիր մարմնի նիստերը եւ կոմիտեների լսումները:*

*Ներկայում երկրի խորհրդարանն աշխատում է Վրաստանի՝ մեծությամբ երկրորդ քաղաքում՝ Քութայիսիում: Խորհրդարանի աշխատանքը Թբիլիսիից այս քաղաք էր տեղափոխվել 2012 թվականին: Քութայիսիում գտնվող խորհրդարանի նոր շենքը, ինչպես հայտնել է ֆինանսների նախարար Նոդար Խադուրին, բյուջեի վրա նստել է 200 մլն դոլար (ավելի վաղ, նախկին կառավարության օրոք, նշվել է շուրջ 80 մլն դոլար): Թբիլիսիում խորհրդարանի հին շենքը, Միխեիլ Սաակաշվիլու նախագահության օրոք, պլանավորվում էր վաճառել մասնավոր ներդրողի. շենքի ներքին ենթակառուցվածքը եւ կահավորանքը քանդվել էին:*

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄՆ ԱՎԱՐՏՎԵՑ. ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ ԲԱՐՁՐ ՉԷ

(Սկիզբը՝ 2-րդ էջում)

ազգային կենտրոնի խորհրդատու **Գիորգի Գախելաձեն,** վերոնշյալ ուղղություններով կրթության նախարարության գործունեությունը հետեւողական չէ: «Նախարարությունում հայտարարեցին, որ այս տարի էլ պետությունը լրիվությամբ կֆինանսավորի առանձին ուղղությունները, թեպետ ներկա դրությամբ այդ առաջնահերթային ուղղությունները հայտնի չեն: Ինքնին առաջնահերթությունների ֆինանսավորումը ողջունելի է, կարեւորը դրանց հստակ ընտրությունն է»,- հայտարարեց խորհրդատուն:

Հիշեցման կարգով նշենք, որ անցյալ տարի պետության առաջնահերթային ուղղությունների մեջ ներառվեց նաեւ էկոնոմիկան: Թեպետ տարիներ շարունակ իրեն զգացնել էր տալիս հումանիտար եւ բնագիտական ուղղությունների կադրերի անբավարարությունը, եւ պետությունը, հաշվի առնելով այդ հանգամանքը, փորձեց ֆինանսավորմամբ յուրովի խրախուսել այդ ուղղությունների գործունեությունը: Թեպետ, ինչպես նշում են փորձագետները, դա իրեն լրիվությամբ չարդարացրեց: «Ինչպես պարզվեց, ֆինանսավորումը խթան չեղավ, եւ այս տարվա գրանցումն էլ ցույց տվեց, որ դիմորդներին դա այնքան էլ չի հետաքրքրում: Հատկանշական է, որ անցյալ տարի ֆինանսավորվող ուղղություններում ազատ հաստիքները բավականին շատ էին, հետեւաբար ակնհայտ է դառնում, որ դիմորդների համար վերոնշյալ ուղղությունները հեռանկարային չեն համարվում»,- հայտարարեց Գիորգի Գախելաձեն:

Վրաստանի կրթության եւ գիտության փոխնախարար **Լիա Գիգաուրին** գտնում է, որ այս տարի Միասնական ազգային ընտրությունները կանցկացվեն նորմալ պայմանակարգով: Նրա հավաստմամբ, ընթացիկ քննությունների գլխավոր նորամուծությունն օտար լեզուների քննությանը ունկնդրման բաղադրիչի ավելացումն է: «Ենթադրվում էր, որ այս տարի ազգային քննություններում ակտիվությունը նվազ կլինի, սակայն համոզված եմ, որ այս տարի քննությունները կանցնեն նորմալ պայմանակարգով»,- հայտարարեց փոխնախարարը:



Անդրադառնալով ընդունելության քննությունների նորամուծություններին՝ փոխնախարարն ասաց, որ առանձնակի մտահոգություն էր առաջացնում այն փաստը, թե դպրոցները որքանով են նախապատրաստված օտար լեզուների քննությանը ունկնդրման բաղադրիչի ավելացման կապակցությամբ: Հարցի կարգավորման համար դպրոցներին օգնություն ցուցաբերվեց, եւ դիմորդները դրա համար նախապատրաստվեցին: Ընդհանուր առմամբ, դպրոցներում մեծ ծավալի աշխատանք կատարվեց: Գտնում եմ, որ հիմնախնդիրները կարգավորված են, եւ քննությունները կանցնեն նորմալ»,- հայտարարեց փոխնախարարը:

Ինչ վերաբերում է դիմորդների համեմատական քիչ քանակությանը, ապա փորձագետների հավաստմամբ դա առնչվում է բուհերի հավաստագրման գործընթացին: «Բուհերին ներկայացված հաստիքները շատ են, եւ դրանք իրականությանը չեն համապատասխանում: Ըստ երեւույթին, բուհերը հաստիքների քանակությունն ավելացնում են ի հաշիվ ուսման որակի»,- հայտարարեց Գիորգի Գախելաձեն: Թեպետ փորձագետը, զուգահեռականներ անցկացնելով նախորդ տարիների դիմորդների քանակության հետ, նշում է, որ տարբերությունը 2005-2009 թվականների համեմատությամբ կազմում է 2-3 հազար, թեպետ այն ժամանակ մրցակցությունն ավելի բարձր էր, ինչը պայմանավորված էր հաստիքների պակաս քանակությամբ: «Դիմորդների քիչ քանակությունը պայմանավորված է նաեւ նրանով, որ շատերը նյութապես ի վիճակի չեն ստանալ բարձրագույն կրթություն: Բացառված չէ նաեւ, որ շատերի համար Վրաստանի բուհերը համապատասխան կրթություն ստանալու երաշխիք չեն հանդիսանում»,- գտնում է փորձագետը:

*ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆ*

ՏԵՍԱԿԵՏ



# ԳՐԻԳՈԼ ՎԱՇԱՁԵ. «ՋԱՎԱԽԱՀԱՅԵՐԸ ՎՐԱՍՏԱՆԻ ԲԱՑԱՌԻԿ ՀԱՅՐԵՆԱՍԵՐՆԵՐՆ ԵՆ»

*Երեւանյան «Առաջին լրատվական» կայքը հրապարակել է Վրաստանի արտաքին գործերի նախկին նախարար (2006-2012 թթ.) Գրիգոլ Վաշաձեի հետ հարցազրույցը՝ «2008-ի փորձն թույլ է տալիս պնդել, որ Հայաստանը չի օգտագործվի Վրաստանի դեմ» վերտառությամբ: Ձեր ուշադրությանն ենք ներկայացնում նշյալ հարցազրույցից հատված, որը, մասնավորապես, առնչվում է ջավախահայությանը:*

***- ԽՍՀՄ փլուզումից հետո, Կրեմլը միշտ փորձել է օգտագործել ջավախահայությանն ընդդեմ Վրաստանի՝ ճնշելու Վրաստանի եվրոպական նկրտումները, սակայն դրանք իրենց նպատակին չեն հասել ջավախահայության ողջամտության շնորհիվ: Օրերս, Կոնստանտին Գամսախուրդիան տեղեկություն տարածեց այն մասին, որ ջավախահայերը Թբիլիսիում ռուսական անձնագրեր են ստանում: Ըստ Ձեզ, Մոսկվան կփորձի՞ օգտագործել ջավախահայերին որպես լծակ:***

- 2008թ. ռուս-վրացական պատերազմի ժամանակ Վրաստանի բոլոր քաղաքացիները, այդ թվում՝ Վրաստանի քաղաքացի էթնիկ հայերը հանդես եկան, որպես Վրաստանի բացառիկ հայրենասերներ: Հույս ունեմ, որ ապագայում եւս այդպես է լինելու, քանի որ ես հատուկ վերաբերմունք ունեմ այդ մարդկանց նկատմամբ ու բարձր եմ գնահատում նրանց ինտելեկտը: Ես հիանալի գիտեմ ու տեղեկացված եմ, որ նրանք տարբերակում են եւս 100 տարի ճամբարում ապրելը եւ եվրոպական ընտանիքին միանալու հնարավորությունները, այն եվրոպական ընտանիքին, որին ե՛ւ հայերը, ե՛ւ վրացիները պատկանում են մշակույթով, պատմականորեն, գենետիկորեն: Փորձեր կլինեն, սակայն ինչ վերաբերում է Վրաստանի քաղաքացի էթնիկ հայերի ողջամտությանը՝ կասկածներ չկան:

Ինչ վերաբերում է բաժանում են անձնագրեր, թե ոչ, անկեղծ ասեմ՝ ինձ համար առանձին քաղաքական ու հասարակական գործիչների կարծիքն այս պարագայում որոշիչ չէ, քանի որ ես դեռ Վրաստանի իրավապահ մարմիններից կամ ԱԳ նախարարից չեմ լսել, որ այդպիսի գործընթաց է գնում, եւ դա իրենից վտանգ է ներկայացնում Վրաստանի համար: Ես պատրաստ չեմ եւ չեմ ցանկանում քննարկել բամբասանքներ: 2008թ. ռուս-վրացական պատերազմի ժամանակ ես ԱԳ նախարար էի եւ ռուսական զորքերին Ջավախեթի թույլ չտվեցին Վրաստանի իրավապահ մարմինների ներկայացուցիչները, որոնք գրեթե բոլորը հայեր էին: Կարծում եմ, որ նման տեղեկությունները չպետք է հայտնվեն ԶԼՄ-ներում, քանի որ կան բաներ, որոնց մասին չպետք է խոսել, որովհետեւ կան ողջամիտ մարդիկ ե՛ւ Թբիլիսում, ե՛ւ Երեւանում, ե՛ւ Ջավախեթիում, ուստի եկեք չփորձենք տրվել սադրանքներին, փորձերին եւ արհեստականորեն լարել իրավիճակն այնտեղ, որտեղ այն լարված չէ:

***- Հայաստանը որոշեց միանալ Մաքսային միությանը, Վրաստանը շարժվում է Եվրամիության Ասոցիացման համաձայնագրի ստորագրման ուղղությամբ: Ինչպե՞ս պետք է կողմերը համադրեն այս տարբեր շահերը, ինչպե՞ս աշխատել, զարգացնել հարաբերությունները:***

- Հայաստանի ղեկավարության դիրքորոշումն ինձ թույլ չեմ տա մեկնաբանել, որովհետեւ այդ ղեկավարությունն ընտրվել է ժողովրդի կողմից, եւ այդ ղեկավարությունը պատասխանատու է ժողովրդի առաջ: Եթե նա ընդունել է ճիշտ որոշում, ապա ամեն ինչ նորմալ է, եթե ոչ՝ ապա ղեկավարությունն ստիպված է լինում պատասխանատու լինել սեփական ժողովրդիառջեւ, ինչպես ցանկացած ժողովրդավարական երկրում, ինչպես Վրաստանում 2012թ. հոկտեմբերի 1-ին. մենք պարտվեցինք ընտրություններում, ժողովուրդը գոհ չէր, մեր ղեկավարությունը հեռացավ, եկավ այլ իշխանություն, ու ես դա ողջունում եմ հնարավոր բոլոր միջոցներով: 2012թ. ընտրությունները Վրաստանին տեղափոխեցին բացարձակապես այլ քաղաքական լիգա: Այս հարցում բոլոր քաղաքական ուժերը միակարծիք են: Ինչ վերաբերում է նրան, որ Հայաստանն ընտրել է իր համար այլ ուղի՝ Մաքսային միություն, իսկ Վրաստանը՝ դեպի Եվրամիություն, ես ողբերգություն դրանում չեմ տեսնում, քանի որ մեր բոլոր հաղորդակցությունները բաց են Հայաստանի համար, մենք համագործակցել ենք բոլոր ուղղություններով, մեր իշխանությունների ներկայացուցիչների հանդիպումները կրել են մշտական բնույթ, միշտ եղել է ուղիղ, անկեղծ, բարեկամական ու սկզբունքային երկխոսություն այն հարցերի շուրջ, որոնց մենք պետք է մեծ ուշադրություն դարձնեինք: Ուստի ես, անկեղծ ասած, չեմ տեսնում խնդիրներ: Եթե Հայաստանին Մաքսային միության անդամակցության ճանապարհին անհրաժեշտ են Վրաստանի հաղորդակցությունները, ապա ես դրանում եւս ոչ մի խնդիր չեմ տեսնում: Դա Վրաստանին եւս տալիս է հավելյալ հնարավորություններ՝ դառնալ այն, ինչ մենք պետք է իրականում լինենք՝ տարանցիկ կենտրոն մեծ տարածաշրջանի համար, հատկապես՝ մեր հարեւանների համար:

***- Պարոն Վաշաձե, չունե՞ք արդյոք մտավախություններ, որ Հայաստանը կօգտագործվի Վրաստանի դեմ Կրեմլի կողմից, քանի որ սեպտեմբերի 3-ի որոշմամբ իր սուվերենությունը կորցրել է: Ի դեպ, նման մտավախություններ հնչել են Երեւանում:***

- Թույլ տվեք ինձ այդ հարցին շատ կարճ պատասխանել՝ իմ անձնական փորձը, որը գալիս է 2008 թվականից, բացառում է այս պնդումը:

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

# ՎԱԽԹԱՆԳ ԽՄԱԼԱՁԵ. «ԸՆՏՐՈՂՆԵՐԸ ՊԵՏՔ Է ԳԻՏԵՆԱՆ, ԹԵ ՈՐ ԹԵԿՆԱԾՈՒՆ ՈՐ ՊԱՇՏՈՆԻՆ Է ՀԱՎԱԿՆՈՒՄ»

*Ինչպես արդեն հաղորդել ենք, Վրաստանի խորհրդարանը տեղական ինքնակառավարման մարմինների ընտրության կապակցությամբ փոփոխություններ կատարեց ընտրական օրենսգրքում: Փոփոխություններն առնչվում են ինքնակառավարման քաղաքների թվին, դրանց քաղաքապետերի, սակրեբուլոյի անդամների ընտրության կարգին, ընտրական նվազագույն արգելագծի մեծությանը, ընտրություններին մասնակից կուսակցությունների ֆինանսավորմանը եւ այլն: Վերոնշյալ փոփոխությունների համաձայնեցման համար, խորհրդարանական եւ ոչ խորհրդարանական կուսակցությունների մասնակցությամբ կազմավորվել էր արտախմբակցային խումբ: Ճիշտ է, վերջին հաշվով խորհրդարանն ընդունեց ընտրական օրենսգրքի փոփոխությունների ծրարը, թեպետ խորհրդարանական ընդդիմադիր եւ ոչ խորհրդարանական կուսակցությունները նշում են, որ փոփոխությունները կատարվել են հօգուտ կառավարող կոալիցիայի: Մանրամասների հստակեցման համար մենք դիմեցինք Վրաստանի խորհրդարանի իրավաբանական կոմիտեի նախագահ Վախթանգ Խմալաձեին:*

***- Բատոնո Վախթանգ, նախ հակիրճ ներկայացրեք այն հիմնական փոխությունները, որոնք կկիրարկվեն տեղական ինքնակառավարման առաջիկա ընտրություններին:***

- Ինքնակառավարման բարեփոխումների արդյունքում, մինչ այդ գործող ինքնակառավարման հինգ քաղաքներին ավելացան եւս յոթը: Օրենքում նշվեց, որ այդ թիվն էլ վերջնական չէ եւ ժամանակի ընթացքում փոխվելու է: Փոփոխությունների համաձայն, ինքնակառավարման միավորում (մունիցիպալիտետում) սակրեբուլոյի անդամների հետ միասին ընտրական է դառնում նաեւ վարչության նախագահի, քաղաքապետի պաշտոնը: Հիշեցնեմ, որ մինչ այդ, ընտրովի էր միայն Թբիլիսիի քաղաքապետը: Հստակեցվեց նաեւ ընտրությունների երկրորդ տուրի անցկացման հարցը: Եթե մինչ այդ քաղաքապետի ընտրություններում երկրորդ տուրը նշանակվում էր այն դեպքում, երբ թեկնածուները 33 տոկոսից քիչ ձայներ էին հավաքում, ապա այժմ հաղթող է համարվում նա, ով կհավաքի ձայների 50 եւ ավելի տոկոսը, հակառակ դեպքում, նշանակվում է երկրորդ տուր, որին կմասնակցեն ընտրություններում առաջին երկու տեղերը գրաված թեկնածուները:

Ինչ վերաբերում է սակրեբուլոյի անդամների ընտրությանը, ապա այստեղ արգելագիծն ավելի ցածր է, քանի որ 50 տոկոսի արգելագծի սահմանման դեպքում, բացառված չէր, որ ստիպված կլինեինք 700-ից ավելի տեղերի համար անցկացնել երկրորդ տուրը, ինչը կապված է լրացուցիչ ֆինանսների, տեխնիկական միջոցների եւ այլնի ծախսման հետ:

***- Կառավարող կոալիցիայի նախաձեռնությամբ, կատարված փոփոխությունները արգելում են քաղաքապետի թեկնածուին միաժամանակ քվեարկվել նաեւ որպես սարկեբուլոյի անդամ:***



- Իրոք, դա այդպես է: Մինչ այդ, միեւնույն անձը կարող էր միաժամանակ հավակնել քաղաքապետի եւ սակրեբուլոյի անդամի պաշտոնին: Դա սխալ մոտեցում է: Ընտրողները պետք է հստակորեն իմանան, թե որ թեկնածուն որ պաշտոնին է հավակնում: Եթե ընդունենք ընդդիմության մոտեցումը, ապա ստացվում է, որ քվեարկվողի համար միեւնույն է, թե որ պաշտոնը կզբաղեցնի՝ քաղաքապետի՞, թե՞ սակրեբուլոյի անդամի, գլխավորը որեւէ բազկաթոռ զբաղեցնելն է: Եթե ընտրություններին մասնակից կուսակցությունը այդ պաշտոնների համար չի կարող առաջադրել տարբեր թեկնածուների, ապա, ըստ իս, ընտրություններին նրա մասնակցությունը կորցնում է իմաստը:

***- Ինքնակառավարման մասին օրենքում հստակեցվել են սակրեբուլոյի եւ քաղաքապետի, վարչության նախագահի իրավասությունները: Եթե սակրեբուլոյին վերապահվում է քաղաքապետին պաշտոնանկ անելու իրավասությունը, ապա ի՞նչ իմաստ ունի նման քաղաքապետի ընտրությունը:***

- Ըստ իս, հարցադրումը սխալ է: Եթե օրինակ, ընտրված քաղաքապետն իր աշխատանքի ընթացքում ընդունում է սխալ որոշումներ, կատարում է չհիմնավորված քայլեր, ի՞նչ է՝ սպասելու ենք մինչեւ համակարգի լրիվ քայքայո՞ւմը: Կամ, ասենք, թույլ է տալիս օրինախախտում: Համաձայնեք, որ նման դեպքերի համար սարկեբուլոյի իրավասությունն ավելի քան տեղին է:

Միաժամանակ նշեմ, որ քաղաքապետին պաշտոնանկ անելու համար քվեարկելու է սակրեբուլոյի անդամների երկու երրորդը, իսկ դա նշանակում է, որ միայն կառավարող կոալիցիայի ջանքերով քաղաքապետին պաշտոնանկ անել հնարավոր չի լինի, քանի որ չեմ կարծում, որ սակրեբուլոներում «Վրացական երազանքը» կունենա նման ներկայացուցչություն:

***- Իսկ ինչի՞ վրա է հիմնված Ձեր այդ կասկածը:***

- Որովհետեւ մենք հնարավոր ամեն ինչ անում ենք, որ տեղական մարմիններում մյուս կուսակցություններն ունենան ներկայացուցչություններ: Մասնավորապես, կատարած փոփոխություններով համամասնական ընտրակարգով քվոտաները հասցրինք 15-ի, հետեւաբար, ընտրական արգելագիծը կազմեց 6,5 տոկոս: Այնպես որ, կուսակցությունը, որը կհավաքի ընտրողների ձայների ոչ թե 10, այլ վեց տոկոսը, սակրեբուլոյում կունենա իր ներկայացուցիչը: Նվազեցրինք նաեւ պետբյուջեից կուսակցությունների ֆինանսավորման արգելագիծը: Հետեւաբար, սակրեբուլոներում կոալիցիայի կողմից երկու երրորդը ունենալու հավանականությունը շատ փոքր է:

***- Քանի որ խոսք բացվեց ֆինանսավորման մասին, խորհրդարանական եւ ոչ խորհրդարանական կուսակցությունները հայտարարում են, որ ֆինանսավորումն անհրաժեշտ է ոչ թե ընտրություններից հետո, ինչպես նշված է փոփոխություններում, այլ դրանից առաջ: Ի՞նչ կասեիք այդ մասին:***

- Եկեք լինենք հետեւողական, Վրաստանում շուրջ 200 կուսակցություն կա: Ընտրություններին այդ կուսակցությունները շատ ավելի քիչ ձայներ են հավաքում, քան անհրաժեշտ է կուսակցության գրանցման համար (հիշեցնեմ, որ կուսակցության գրանցման համար անհրաժեշտ է 1000 պատվիրակի ստորագրություն): Հարց է ծագում. նման կուսակցություններն ինչո՞ւ պետք է ֆինանսավորվեն պետության կողմից՝ ի հաշիվ մեր հարկատուների:

Ընդդիմախոսները նշում են նաեւ գովազդային պայմանների անհավասարության մասին: Հարցի կարգավորման համար, մեր նախաձեռնությամբ, որոշում ընդունվեց, որ եթե ընտրություններին կուսակցությունը հավաքի 60 հազար ձայն, ապա հաջորդ ընտրություններում գովազդման համար կստանա եռակի ավելի, այսինքն՝ 180 հազար լարի:

***- Ընդդիմությունը որոշակի դիտողություններ ունի նաեւ ձայների հաշվման գործընթացում իր ներկայացուցչությունն ունենալու հարցում:***

- Դրանում նրանցից ոչ մեկը արգելքներ չի հարուցում: Փոփոխությունների համաձայն, ընտրական յուրաքանչյուր սուբյեկտ ընտրական հանձնաժողովում եւ տեղամասերում կարող է ունենալ երկուական ներկայացուցիչ: Ուղղակի, միաժամանակ երկուսն էլ չեն կարող հետեւել ընտրություններին: Նրանք գործելու են միմյանց փոխարինելով: Ընտրական տեղամասում նման ներկայացուցիչների համար բյուջեից հատկացվում է 100 լարի: Եվս մի փոփոխություն. եթե ընդդիմադիր կուսակցությունները հիմնում են դաշինք, ապա վերոնշյալ գումարը 50 տոկոսով ավելացվում է:

***- Վերջում մի քանի խոսք՝ ընտրողների ցուցակների մասին:***

- Դա, հավանաբար, բոլոր ընտրությունների աքիլլեսյան գարշապարն է: Որոշակի հստակություն մտցնելու նպատակով կառավարությունը 200 հազար լարիով ձեռք բերեց հատուկ ծրագիր, որը հանրային ռեեստրում առկա տվյալների լուսապատճեններից կազմում է թվային տարբերակը: Ծրագիրը համեմատում է բազայում առկա քաղաքացիների լուսանկարները: Այդ տարբերակով, զգալիորեն նվազում է ցուցակներում ազգանունների կրկնության հավանականությունը:

***ՅՈՒՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ***